ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1866-Ա « 09 » ապրիլի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի Հ.2157-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել լ/ա Հռիփսիմե Հովհաննիսյանի դիմումը՝ Երևանի քաղաքապետի 2010 թվականի հունիսի 4-ի հ.2157-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին և ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.5538 վկայագիրը:

Համաձայն 26.02.2026թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.5538 վկայագրի՝ Շինարարների փողոց հ.14 շենքի թիվ 38 հասցեում գտնվող գույքի 1/7 բաժնեմասի նկատմամբ ժառանգ է հանդիսանում Հռիփսիմե Հովհաննիսյանը:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով 26.02.2026թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.5538 վկայագիրը.

1. Երևանի քաղաքապետի 2010 թվականի հունիսի 4-ի «Երևան համայնքի սեփականություն համարվող Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Շինարարների փողոցի հ.14 շենքի հ.38՝ 28.1քմ ընդհանուր մակերեսով բնակարանն անհատույց օտարելու մասին» հ.2157-Ա որոշման 3-րդ պարբերությունից հանել «Լևոն Հովհաննիսյանին» բառերը:

2. Որոշման 1-ին կետում՝ «Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ՝ Արսեն Սերյոժայի Ամյանին» բառերը փոխարինել «Լիազորել Երևանի

քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին» բառերով:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ